

**Հաստատված է
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ամբիոնի << 31 >> << 08>> 2018. նիստում
(արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ _____ Մ. Մուրադյան
2018թ.**

**ՀՀ ՈՍԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Հռոմեական քաղաքացիական մասնավոր իրավունք
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Է. Չիբուկչյան հեռ.099-20-20-81
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	Հեռակա ուսուցում 1-ին,2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	Բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ	2 (երկու)
ԴԱՍԱԺԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	<p>«Հռոմեական քաղաքացիական (մասնավոր) իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, որից 6 դասախոսություն, սեմինար 4, ինքնուրույն աշխատանք 50 ժամ:</p> <p>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում,պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարքի ձևով:</p>
ՄՈՒՏՔԱՅԻՆ ԴԱՀԱՆՁՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «Հռոմեական 1. իրավունք» դասընթացի իմացության վրա
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«Հռոմեական իրավունք» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում է նրա պատմական չակատագիրը, հզոր ազդեցությունը օրենսդրության հետագա զարգացման և իրավական ուսմունքների վրա, հարաբերակցությունը ընդհանուր իրավունքի մյուս ոլորտների հետ, առանձնահատկությունը:

<p>ՆՊԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐ/ՆԵՐ</p>	<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հռոմեական իրավունքում մշակված գիտական տերմինաբանությանը, կապը ժամանակակից օրենսդրության հետ, հատկապես նրա կարևորագույն մասի՝ պարտավորական իրավունքի հետ:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ներկայացնել հռոմեական քաղաքացիական (մասնավոր) իրավունքի առարկան, - ուսումնասիրել հռոմեական իրավունքում մշակված գիտական տերմինաբանությունը, - ծանոթացնել իրավաբանական լեզվին, - ծանոթացնել հռոմեական մասնավոր իրավունքի ազդեցությունը օրենսդրության հետագա զարգացման վրա, - ներկայացնել ժառանգական իրավունքի հիմնական հասկացությունները և տերմինները, որոնք պահպանում են իրենց նշանակությունը մինչև մեր օրերը:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p>1. Կարողնա՝</p>	<p>1) Ստանալ իրավաբանին անհրաժեշտ ընդհանրական և տեսական գիտելիքներ,</p> <p>2) Տիրապետի մշակված գիտական տերմինաբանությունը, իրավաբանական լեզվին, իրավաբանական տերմիններին,</p> <p>3) Ըմբռնի հռոմեական մասնավոր իրավունքի նշանակությունը համաշխարհային մասնավոր իրավունքի զարգացման գործում:</p>

<p>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	
<p>Հիմնական</p>	<p>1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ: 1. Հ. Վ. Ավետիսյան «Հռոմեական մասնավոր իրավունք» Երևան 2013թ.: 2. Հ. Տ Հայրապետյան «Հռոմեական մասնավոր իրավունք» Երևան 2000թ.: 3. Գ.Սաֆարյան, Ա. Եսայան «Հռոմեական իրավունք» ուսումնական ձեռնարկ բուհերի համար Երևան 2013թ.:</p>

Լրացուցիչ	<ol style="list-style-type: none"> Հայկական Սովետական հանրագիտարան «Հռոմեական իրավունք» Երևան 1980թ. М. Черниловский «Римское частное право» М.2010г.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Ստուգարք /ստուգված, չստուգված/
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	<p>Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100 % (ստուգված) առաջադիմություն:</p> <p>Սովորողների գիտելիքները ունակությունները և հմտությունները գնահատվում են <<Գերազանց>>, <<Լավ>>, <<Բավարար>> և <<Անբավարար>> կամ <<Ստուգված>> կամ <<Չստուգված>></p> <p>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) <<Գերազանց>> եթե ունկդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական , գրագետ ու տրամաբանորեն կա է շարադրում այն չի դժվարանում պատասխանել ,ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել սխալներ թույլ չտալով.</p> <p>բ) <<Լավ>>, եթե սովորողը հիմնավոր գիտի գրագետ է և ըստ էության շարադրում այն,հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ.</p> <p>գ) <<Բավարար>>, եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները թույլ է տալիս անճշտություններ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը.</p> <p>դ) <<Անբավարար>>, եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը,թույլ է տալիս էական սխալներ:</p>
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Ներկայություն	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:</p> <p>Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ներառում է ունկընդունում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված հասկացված խնդիրների պարզաբանում: Ուսանողն այս դեպքում հնարավոր է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետներ:</p>

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՈՒՄ

Թեմա 1 Հռոմեական մասնավոր իրավունքի ուսումնական առարկան և աղբյուրները (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Հռոմեական մասնավոր իրավունքի ուսումնական առարկան: 2. Ներքին կառուցվածքը: 3. Ելությունը և դասավանդման նպատակը: 4. Իրավունքի աղբյուր հասկացությունը: 5. Յուս սկրիպտում և յուս նոն սկրիպտում: 6. Կոնստիտուցիոնես պրինցիպես: 7. Սենատուս կոնսուլտուս: 8. Էդիկտա մագիստրատում: 9. Ռեսպոնսա պրուդենտում: 10. Հռոմեական իրավունքի կողիֆիկացիան: 	<p>Հարցեր 1-10 - անցկացվում է դասախոսություն՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ:</p> <p>Հարցեր 7 - ինքնուրույն աշխատանք.</p> <p>Ծանոթանում են գրականությանը տվյալ հարցի հետ:</p> <p>Հարցեր 1-10 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով Հուստինիանոսի կողիֆիկացիայի վրա:</p>

Թեմա 2 Իրավունքների պաշտպանության ձևերը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Պետական դատարանի առաջացումը: 2. Ընդհանուր հասկացություն լեգիսակցիոն, ֆորմալար և էքստրաօրդինար դատավարությունների մասին: 3. Հայցերի հասկացությունը և տեսակները: 4. Պրետորական պաշտպանության հատուկ տեսակները: 5 Հայցերի վաղեմությունը: 	<p>Հարցեր 1-5 - ինքնուրույն աշխատանք</p>

Թեմա 3
Անձինք հռոմեական իրավունքում: Ամուսնաընտանեկան և գույքային իրավունքները
(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Անձի իրավունակության հասկացությունը: 2. Հռոմեական քաղաքացիների իրավական դրությունը: 3. Լատինների և պերեգրինների իրավական դրությունը: 4. Ստրուկների իրավական դրությունը: 5. Կոլոնների իրավական դրությունը: 6. Իրավաբանական անձինք: 7. Հռոմեական ընտանիքի ընդհանուր բնութագիրը: 8. Իրավահարաբերությունները ամուսինների միջև: Ամուսնության ձևերը: 9. Հռոմեական ամուսնության կնքումը և դադարեցումը: 10. «Իրեր և առարկաներ» հասկացությունը: 11. Տիրապետման հասկացությունը և տեսակները: 12. Սեփականության իրավունք: 13. Իրավունքներ ուրիշի գույքի նկատմամբ: Սերվիտուտներ: 14. Գրավի իրավունք	Հարցեր 1-14 - անցկացվում է դասախոսություն. պարզաբանելով սովորողների կողմից առաջադրված առանձին հարցեր:

ՀԱՐՑԱՇԱՐ

- <<Հռոմեական քաղաքացիական /մասնավոր/ իրավունք>>
 առարկայի ստուգարքի /հեռակա ուսուցման 1-ին կուրսի/
- Հռոմեական /մասնավոր/ քաղաքացիական իրավունքի ուսումնասիրման առարկան
 - Հռոմեական իրավունքի ներքին կառուցվածքը

3. Հռոմեկանա մասնավոր իրավունքի եռթյունը և դասավանդման նպատակները
4. Հռոմեկան իրավունքի պատմական ուղին և նրա ռեակցիան
5. Իրավունքի աղբյուրի հասկացությունը
6. Jus scriptum և jus non scriptum /գրված և չգրված իրավունք/
7. Constitutiones principis /կայսերական սահմանադրություններ/
8. Senatus consultus /սենատի որոշումներ/
9. Edicta magistratum /մագիստրատների էդիկտներ/
10. Responsa prudentium /իրավունքի գիտակները և նրանց գործունեությունը/
11. Հռոմեկան իրավունքի մասնավոր կոդիֆիկացիաները
12. Հռոմեկան իրավունքի բարբարոսական կոդիֆիկացիաները
13. Հուստինիանոսի օրենսգիրքը /Corpus iuris civilis/
14. Պետական դատարանի առաջացումը հին Հռոմում
15. Լեգիսակցին դատավարություն
16. Ֆորմուլար դատավարություն
17. Էքստրաօրդինար դատավարություն
18. Հայցերի հասկացությունը և տեսակները
19. Պրետորական պաշտպանության հատուկ տեսակները
20. Հայցերի վաղեմությունը հռոմեկան իրավունքում
21. Անձի իրավունակության հասկացությունը և նրա բաղկացուցիչ մասերը
22. Հռոմեկան քաղաքացիության ձեռքբերումը
23. Հռոմեկան քաղաքացիների դրությունը հանրային և մասնավոր իրավունքում
24. Ազատարձակներ /libertine/
25. Հռոմեկան քաղաքացիության դադարումը
26. Լատինների /latini/ իրավական դրության ծագումը
27. Լատինների դրությունը հանրային և մասնավոր իրավունքում: Լատինների քաղաքացիությունը
28. Պերեգրինների /peregrini/ իրավական դրությունը
29. Ստրուկների դրության ընդհանուր բնութագիրը: Ստրկական դրության հաստատման եղանակները
30. Ստրուկների / servi/ անձնական և գույքային դրությունը
31. Ստրուկների ազատ արձակելը /manumission/
32. Կոլոնների /coloni/ իրավական դրությունը
33. Իրավաբանական անձիք հռոմեկան իրավունքում
34. Հռոմեկան ընտանիքի ընդհանուր բնութագիրը. Ազնատական և կոզնատական հարազատություն
35. Ամուսնության ձևերը հռոմեկան իրավունքում
36. Ամուսինների հարաբերությունները cum manu ամուսնությունում
37. Ամուսինների հարաբերությունները sine manu ամուսնությունում
38. Ամուսնության պայմանները հռոմեկան իրավունքում
39. Ամուսնության կնքումը: Նշանադրություն /sponsalia/: Հարսանեկան օժիտ /dos/
40. Ամուսնության դադարումը /ամուսնալուծություն/
41. Իրավահարաբերությունները մոր և երեխաների միջև

42. Իրավահարաբերությունները հոր և երեխաների միջև
43. Հայրական իշխանության /pater potestas/ դադարումը
44. Օրինականացումը /legitimatio/ և որդեգրումը հռոմեական իրավունքում
45. Մարմնավոր /res corporals/ և անմարմին /res incorporales/ իրեր: Անշարժ և շարժական գույք
46. /Res mancipi et res nec mancipi/ Բաժանելի և անբաժան գույք
47. Սպառելի և ոչ սպառելի իրեր: Բարդ և պարզ առարկաներ
48. /Res in comercio et res extra comercio/ Գլխավոր և երկրորդական իրեր
49. Տիրապետման հասկացությունը և նրա տարրերը /animus possidendi և corpus possessionis/
50. Possessio civilis /ցիվիլյան տիրապետում/: Միջնորդավորված և արետորական տիրապետում
51. Սեփականության իրավունքի հասկացությունը
52. Սեփականության իրավունքի ձեռքբերումը ըստ տիրապետման վաղեմության
53. Specificatio /առարկաների վերամշակում/: Սեփականության իրավունքի դադարումը
54. Սերվիտուտների /servitus/ հասկացությունը և նրանց իրավաբանական բնութագիրը
55. Հողային սերվիտուտներ /servitus praediorum/
56. Անձնական սերվիտուտներ /servitus personarum/
57. Հողի վարձակալության երկարաժամկետ պայմանագիր /superficia և emphyteusis/
58. Գրավի իրավունքը և տեսակները /pignus և hypotheca/
59. Պարտավորության հասկացությունը և տեսակները հռոմեական իրավունքում
60. Պարտավորությունների ծագման հիմքերը
61. Պայմանագրերի տեսակները
62. Պայմանագրերի իսկության պայմանները, նրանց բովանդակությունը և կնքումը
63. Պարտավորության կատարումը և պատասխանատվությունը չկատարման համար
64. Բանավոր /վերբալ/ կոնտրակտներ
65. Գրավոր /լիտերալ կոնտրակտներ
66. Իրական /ռեալ/ կոնտրակտներ
67. Կոնսենսուալ կոնտրակտներ
68. Պակտերն ու նրանց տեսակները / pacta vestita և pacta nuda/
69. Մասնավոր իրավախախտումներից բխող պարտավորություններ
70. Ժառանգական իրավունքի հասկացությունը և նրա զարգացումը հռոմեական իրավունքում
71. Ժառանգումը ըստ օրենքի /ab intestato/
72. Ժառանգումը ըստ կտակի /hereditas ab testamento/

73. Լեզատները և ֆիզեոկոմիսիաները՝ որպես կտակային
հանձնարարության ձևեր